

## ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆ

Շէքսպիր. Համլէտ. Դանեմարքի իշխան. Ողբերգութիւն Յինգ արարուածով. - Անգլիերէնից թարգմանեց Յովհաննէս խան Մասէհեան.

Թիֆլիս, տպ. Մ. Եարածէ եւ ընկ. 1894 (Հրատ. Թիֆլիսի Հ. Հրատ. Հսկերութեան, № 83).

Հայկական նոր գրականութեան վիճակովն հետաքրքրուող ամէն որ կր խոստովանի, որ մենք խիստ կարօտ ենք եւրոպական օրինակելի հեղինակների գեղեցիկ երկերի թարգմանութեանց. նոցանով ճշմարիտ բանաստեղծութեան ճաշակը գուցէ փոքր ի շատէ դարգանայ մեր աղքատիկ գրական ասպարիզում, ուր այժմ մանաւանդ այնպիսի ամպլուսիւն է տիրում: Պատմական մի օրէնք է գրականութեանց համար, որ աղքատները հարուստներից երկար ժամանակ մնալով իրանց ապագայ հարստութիւնն են պատրաստում վերջապէս, մեր գրականութիւնն էլ երեւի դեռ շատ ու շատ պիտի բաղխէ օտարի դուռը, մինչև որ իւր մէջ ծնի այն հանճարը, որ ընդունակ լինի իւր յեանից քարշել հասարակաց միտքը, ազգի ստեղծագործող գոբութիւնը:

Սակայն բանաստեղծութեան մէջ կան հսկաներ, որոնց ազդեցութեան համար սահման չկայ, որոնց նշանակութիւնը հայրենիք չունի. ամենահարուստ գրականութիւններն իսկ իրանց աշխարհագրական կամ ազգային սահմաններից դուրս ծաղկած այդպիսի հանճարներին անպատճառ օրգեգրում են և նոցանից էլ նոր կենսական ոյժ ստանում: Եւ մենք, որ մինչև այժմ խորթ զաւակներն ենք մուստների, մենք՝ ասում եմ, սիրելի պիտի համարենք ամէն փորձ, որ նպատակ ունի մեզ այդպիսի համաշխարհային հանճարների հետ ծանօթացնելու:

Շէքսպիրն այն անդուգական հեղինակներից մէկն է, որոնց բոլոր քաղաքակիրթ ազգերն իրանց հարազատն են ճանաչում և «Համլէտը» նորա այն ճիւղաշարժիկ գործն է, որ սիրելի է ամէն մի լուսաւորուած անհատի՝ առանց ազգութեան խտրութեան:

Չկայ թերեւս բանաստեղծական հանճարի մի այլ արտադրութիւն, նոյն իսկ բոլոր եւրոպական գրականութեանց մէջ, որ այնքան ժողովրդական լինէր, այնքան հանրաժանօթ, որքան «Համլէտը», այդ կողմից նորա հետ գուցէ միայն Հոմերոսի անմահ քերթուածները կարող են մրցել: Այդ անօ-

րինակ ժողովրդականութեան պատճառն այն է, որ «Համլէտը» բացի առհասարակ վերին աստիճանի մի չքնաղ գեղարուեստական հրաշակերտ լինելուց, որպիսի են նաեւ Շէքսպիրի «Մակբեթը», «Լիր արքան», «Օթելլոն», «Ռամէօ և Ջուլիետը», «Յուլիոս Կեսարը» և այլն, ունի մի այնպիսի առանձնատկութիւն էլ, որ մասնաւորապէս «Համլէտին» տեղի և ժամանակի պայմաններից դուրս մի գրաւորութիւն է տալիս:

Մինչ, օրինակ, նոյն Շէքսպիրի միւս մեծ գործերը մեր ուշադրութիւնը, մեր զգացողութիւնները կենտրոնացնում են առաւելապէս մի որոշ կրքի, որոշ կենսական կամ հոգեբանական աչքի ընկնող երևոյթի վրայ, որ գերակշռող է հանդիսանում այս կամ այն ողբերգութեան մէջ. «Համլէտը» կտրճես մեր առաջ պատկերացնում է մարդկային հոգին ամբողջապէս իւր ազնիւութեղ կողմերով, մարգկային կեանքը իւր թերութիւններովն ու արժանաւորութիւններով:

Համլէտը մեր աչքում նախ մարդ է և ապա հանեմարքի իշխան, որին շրջապատող հասարակութիւնը և կենսական ճախող պայմաններն ու հանգամանքներն այնպիսի մի բացառիկ ողբերգական միջակի մէջ են դրել: Գրականութեան ճաշակ ունեցող ամէն մի մարդու համար սարդ է և հասկանալի «Համլէտի» ժողովրդականութեանը նպաստող ոյգ-հանգամանքը, և մենք ստիպուած կր յիշեմք շատ երկարել մեր խօսքը, եթէ կամենայինք այստեղ դրադուել «Համլէտի» քննութեամբը, որ ինքն ըստ իմքեան նիւթ է գործած մի խիստ ընդարձակ գրականութեան:

Հայ հասարակութեան համար էլ Շէքսպիրի գործերից ամենից շատ ծանօթն է «Համլէտը», շնորհիւ մանաւանդ հանգուցեալ Պ. Ազամեանի հանճարեղ խաղի, որ այդ ողբերգութեան մէջ առանձնապէս փայլեցրեց իւր գերատանական արտուական քննարարը: Այս պատճառով առաւել ևս զանկալի մի գործ է մեզ համար Յ. Խան Մասէհեանի աշխատութիւնը, որպէս «Համլէտի» հայերէն անդրանիկ բանաստեղծական թարգմանութիւն, որի վրայ անհրաժեշտ ենք համարում ընթերցող հայ հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել մի երկու խօսքով, որքան այդ թող է տալիս Արարատի սահմանափակ ծաւալը:

«Համլէտի» այս թարգմանութիւնը մեզ վրայ գեղեցիկ տպաւորութիւն է թողնում նախ այն պատճառով, որ հէնց մի քանի էջ

կարգալուց յետոյ մարդ խոստովանում է որ թարգմանիչը քաջ գիտէ իւր մայրենի լեզուն և վստահութեամբ օգտուում է իւր գիտութիւնից, մի առաւելութիւն որին կարող են նախանձել մեր շատ անուն հանած հեղինակներն ու թարգմանիչները. երկրորդ, այդ լեզուն ճոխ է և բանաստեղծական, որ մի անհշատեշտ պայման է անշուշտ Շէքսպիրի նման հեղինակների գործերի թարգմանութեան համար: Այնուհետև Մասէհեան խանի թարգմանութիւնն այն ամենամեծ արժանաւորութիւնն ունի որ նա կատարուած է անգլիերէն բնագրից, այս կողմից այս թարգմանութիւնը մեզանում առաջինն է և միակը Շէքսպիրի գրուածքների թարգմանութիւններից, մանաւանդ որ Մասէհեան խանը հմուտ է անգլիերէնին, որ ապացուցանուում է թարգմանութեան զարմանալի նմանութեամբ բնագրին և նոյն իսկ չափազանց ճշգրտութեամբ: Վերջին յատկութեան շնորհիւ մինչև իսկ զոհուած է տեղ տեղ հայերէնի պարզութիւնն ու զիւրմբունելի լինելու արժանիքը. թարգմանիչը մինչ այն աստիճան աշխատել է ճշգրտութեամբ հաղորդել Շէքսպիրի ամէն մի նախադասութիւնը, սրախօսութիւններն ու բառախաղերը, որ երբեմն հայ ընթերցողի համար արդէն անհասկանալի նախադասութիւններ ու դարձուածներ է գործ դնում:

Այսպէս, օրինակ, հայ ընթերցողի համար շատ էլ պարզ չէ հետևեալ նախադասութիւնը.

... ով կապրի \*) կը մեռնի

Անցնելով ընդթիւնից գէպ յաւերժութիւն (Ար. Ա. Ա. տես. 2),

Որ բառացի թարգմանութիւն է անգլիերէն բնագրի հետևեալ տողերի.

— all that live must die

Passing through nature to eternity.

Այս խօսքերով թագուհին Համլէտին կամենում է ասել թէ՛ ամէն կենդանի, ասորող (արարած) պիտի մեռնի, անցնելով երկրաւոր կեանքից գէպի յաւիտենականութիւն:

Մի այլ օրինակ.

... Բեզ թանգ առաջարկիր,

Թէ ոչ, (քո խեղճ ոճի շունչը չը կտրելով)

Այդպէս թիւր երթալով, գու ինձ կառաջարկես

Մի յիմարի տեղ: (Ար. Ա. տես. 4)

\* Պէտք է նկատել որ Մասէհեան խանը ներկան միշտ գործ է ածում ռուսաբանութեան նման «ընում եմ», «ծգտում եմ» եւն:

Պօլօնիուսը հեգնելով Օֆելիայի «սիրոյ առաջարկներ» բառերը, իրար վրայ գործ է ածում «առաջարկել» բայը, յայտնելով թէ խօսում է իւր իսկ Օֆելիայի ոճովը — not to crack the wind of the poor phrase, — որմիանգասայն բառացի է յառաջ բերել թարգմանիչը:

Նոյն տեսարանում Պօլ. իւր դստերն ասում է՝ դու խօսում ես որպէս դաւար աղջիկ — you speak like a green girl. անշուշտ այստեղ green ասելով հասկանում է «խափ» «խափամիտ» և ոչ «գալար» որի իմաստը միայն ձգձգելով կարելի է մօտեցնել «խափամիտ» բառի նշանակութեանը, քանի որ դաւար ասելով մարդ նախ և առաջ «մատաղ», «մատաղահաս» է հասկանում առանց յետին մտքի:

Երկրորդ արար. երկրորդ տեսարանում Համլէտը խօսելով Ա. դերասանի հետ՝ յիշեցնում է նորա արտասանած մի մենախօսութիւնը, «որ երբէք չներկայացուեց, կամ գոնէ ոչ աւելի քան մէկ անգամ», որովհետև այդ թատերագութիւնը որքան յիշում եմ, ամբողջին հաւանելի չեղաւ. դա կարծես խաւիար էր ամբօխի համար — it was caviare to the general: Վերջին նախադասութիւնը հայը ոչ մի կերպ հասկանալ չէ կարող. ուստի թարգմանիչներից մէկը իւր լեզուի մէջ եղած բառականին գռեհիկ մի ասացուածովն է արտայայտել այդ միտքը, բայց ճշգրտութեամբ — ЭТО БЫЛЪ АПЕЛЬСИНЪ ДЛЯ ИЗВѢСТНАГО РОДА ЖИВОТНЫХЪ, որ համապատասխանում է մեր ոչ նուազ գռեհիկ «էշն ինչ գիտէ, նուշն ինչ է» խօսքին, այս է Համլէտի միտքը:

Համլէտի Օֆելիային ասած խօսքերից (Ար. Գ. տես. 1.) «եղիր զգաստ, որպէս սառուցը, ջինջ, որպէս ձիւնը» — be thou as chaste as ice, as pure as snow, — զգաստ, բառը չէ համապատասխանում chaste-ի իմաստին, որ է «կոյս, ողջախոհ» և կարող էր այս տեղ թարգմանուած լինել «յստակ, մաքուր, որպէս սառույց»:

Գ. արար. 3 տես. Ահա կախարդային (-ական) ժամը գիշերուայ,

Երբ որ յօրանջում են գերեզմանները ևլն.

When churchyards yawn.—yawn նշանակում է «յօրանջելը» և «բերանի բացուելը» առհասարակ, օր. վերքի. yawning կարող է նշանակել նաև «ճեղք, բացուածք»: Նոյն իսկ բանաստեղծական աղատութեամբ հայերէն գերեզմանների «յօրանջելը» հասկացուել չէ կարող, և անշուշտ պէտք էր ասել «բացուում

են գերեզմանները» կամ, շատ - շատ, «բաց-  
ուում են գերեզմ. բերանները» :

Շատանում ենք այս մի քանի պատահա-  
բար առնուած օրինակներովը. կարծում ենք  
թէ այսքանը բաւական է ցոյց տալու հա-  
մար, թէ ինչն ենք համարում չափազանց  
ճշգրտութիւն ց. խան Մասէհեանի թարգմա-  
նութեան մէջ. նմանապէս ցանկալի էր մեզ  
յօեսնել լուրջ տեղերում «սպրտնած», «աք-  
լոր», «պոստեց յօնքը» և սոցա նման ոչ  
գրականական բառեր ու դարձուածներ, որոնց  
թիւը, պէտք է խոստովանել, «Համլէտի»  
թարգմանութեան մէջ բարեբաղդաբար շատ  
և շատ աննշան է: Չենք ընդունում ան-  
շուշտ և «համակերպացնել» բայը, որ գործ է  
ածում «Համլէտը» իւր գեղեցիկ մենախօ-  
սութեան մէջ, Բ. արարուածի վերջում:  
Շատ խորթ է թուում մեզ նաև «տէր իմ»  
անունը, որ Օֆելիան տալիս է իւր հօրը,  
նորա հետ խօսելիս. անգլիական «my lord»-ը  
համարձակ կարելի էր մի կողմը թողնել հա-  
յերէնում և սովորական «հայր իմ» բա-  
ռերը գործ ածել:

Սակայն բոլոր յառաջ բերուած աշար-  
մար դարձուածները բնուէն նուազեցնում  
Մասէհեան խանի թարգմանութեան արժա-  
նաւորութիւնները, և մեզ մնում է միայն  
ցաւել որ տեղի սղութեան պատճառով չենք  
կարող այստեղ ընթերցողին մի ճաշակ տալ  
այդ մասին. այդ էլ բանաստեղծութիւն սի-  
րողը թող ինքը կարգայ և վայելէ:

Ուշադրութեան արժանի է նաև Մա-  
սէհեան խանի թարգմանութեան տաղտա-  
փութիւնը, որի մասին կր խօսենք «Արա-  
րատի» յաջորդ համարում մի առանձին յօդ-  
ուածով:

Թ. Թ.



ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼՐԱԳ-  
ՐՈՒԹԵԱՆ. Ի ՍԿԶԵԱՆԷ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ  
ԳՐԵՑ Հ. ԳՐԻԳՈՐԻՍ ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ  
1893. Վիեննայ. էջ 226 ութածաւ փոքրագիր.

«Թէ միշնաթով վարդ ընծայեն, հոտադտելն յետ կեցիր.  
Փուշն որ առնուս. լաւ է քեզ»:

«Թէ տմարդին կամուրջ կապէ, դուն վրայն մի անցնիր.  
Ջուրը տանի թող զքեզ»:

«Թէ աղուէսը հրաւիրէ, դուն ի շրջին մի պարկիր.  
Առիւծն ուտէ թող զքեզ»:

Գ. Արքեպիսկ Այվազովսքի:

Քիչ չէ պատահում որ միեւնոյն նիւթի մասին միա-  
ժամանակ գրում են երկու հոգի. մի աշխատութիւն երկու

հոգի առանց միմեծ միւսի գիտութեան աշխատում են ի կա-  
տար ածել և տպագրութեան յանձնել:

Գիցուք մինը մեծ տանջանքով գրում կամ թարգմա-  
նում է մի նիւթ. մի աշխատութիւն և և ահա՛ աւարտելուց  
յետոյ միայն լսում է որ նոյն բանը մի ուրիշն էլ է պատ-  
րաստել տպագրութեան. Սյոտեղ ինքն ըստիքեան առաջին  
տեսածը չի գնահատուում կամ երկրորդը պախտրակուում.  
այլ գնահատուում է արժանաւորը. մինը յետ է ձգուում,  
միւրը ընդունելութիւն գտնում:

Սոյն օրինակ դէպք պատահեց Վիեննայի Միթար-  
եան հայրերից՝ Հ. Գրիգորիս վ. Գալէմբարեանի վերջերս  
լոյս ընծայած «Պատմութիւն հայ լրագրութեան» երկի  
ա. գրքոյի. և տողերիս գրողի «Հայոց պարբերական մա-  
մուլը» խորագրով մի գործի հետ: Հայր Գալէմբար «Հանգէս  
Սմարեայի» մէջ սկսեց մի տեսութիւն գրել հայ լրագրու-  
թեան մասին, դեռ 1887 թուականից. կաղի կող առաջ  
գնալով իւր պատմութեան ծայրը հասցրեց 1859 թուակա-  
նի վերջերը. «Հանգիսի» 1890 թուականի տետրակների մէջ.  
Սաղին փորձը չէր Հ. Գալէմբարեանի գործը. միայն մինչեւ  
իւր ժամանակ եղածներից ընդարձակ. թէեւ ոչ ազատ ան-  
շերելի սխալներից. Հեղինակը շատ սակաւ աղբիւրներ է ու-  
նեցել իւր ձեռքի տակ ինչպէս յիշել է ինքը. դորա համար  
և և սպասելի չէր մի լիակատար և ճշգրիտ գործ. Հայ լր-  
ագրութեան մասին աղբիւրներ կան բացի Հ. Գրիգորիսի ի-  
շածներից և և գրքից. աւելի քան տասն. նոյն չափ էլ հատ  
ու կտոր գրուածներ. գրչագիր նիւթեր, տեղեկութիւններ,  
նամակներ, որոնք մենք աչքի առաջ ենք ունեցել մեր «Հայոց  
պարբերական մամուլը» գրելիս:

«Հանգէս» մամուլայ. լրագրի 1887. 88. 89. 90  
թուերի միջի ժողովելով Հ. Գալէմբարեան որպէս իւր գոր-  
ծի առաջին հատոր. վերջերս 1893 թուին հրատարակեց  
առանձին գրքոյիկով:

Վերապատուելի հայրը շտապել էր իւր գրքից մի օրի-  
նակ ուղարկել էր Կոստանդնուպոլիս. Սահակ Մեսրոպեան  
1894 թուականի մրցանակաբաշխութեան մասնակցելու  
համար. Գննադատները համեմատելով նիւթերի պակա-  
սութիւնը, ժամանակագրական աչքի ընկնող սխալները. չէ-  
ին կարող յետ չը ձգել արժանաւոր գրուածների շարքից.  
և և ինչպէս յայտնի է ոչ մի պարզեւատրութեան յարժանա-  
ցաւ որպէս «կիսկատար» գործ. Իսկ անհամեմատութիւն չի  
լինի կարծում ենք արձանագրել այստեղ որ նոյն թուականի  
մրցանակաբաշխութեան ուղարկուած «Հայոց պարբերական  
մամուլը» ստուար աշխատութիւնը. որ 1794—1894 հայ լր-  
ագրութեան ամբողջացած պատմութիւնն է բաղմաթիւ ծա-  
նօթութիւնների. առաջին կարգի պարգէլի հետ արժանա-  
ցաւ Գործադիր Միւլուն Բանձնաժողովի քաջաբերութեան.  
թողնելով վերջինիս մասին գրելը ուրիշներին. որոնք գործին  
տեղեկակ են և և լուրջ քննադատներ. խօսենք առաջինի մա-  
սին թէ ինչ կէտերում Հ. հեղինակը անձեռնհաս է եղել իւր  
տեսութիւնը գրելիս:

Յիշենք որ սոյն գրքոյի մասին մեզանից առաջ գրողնե-  
րը չեն վերաբերուել որպէս քննողներ. չեն քրքրել նիւթեր,  
սխալների մասին չեն գրել. այլ թիթեւ ակնարկ գրքի կողմի  
և և նիւթի արժանաւորութեան վերայ. Հինգ տարուայ չափ  
կարելոյն չափ մանրադնին հետադատած լինելով հայ մամուլի  
գործի անցեալն ու ներկան. դժու. ր չէ մեզ մոտել Հ. Գա-  
լէմբարեանի գրքոյի ներքին խաւերի մէջ. մասնաւոր անե-  
լով այն թերութիւնները, որ ինչպէս ասացինք սպրդել են  
հայր սուրբի աշխատութեան մէջ: